326502

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» N 563 ՊԱՅՄԱՆԱԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «03» «03» 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Գ. Գրիգորյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով 19.12.2019 թվականին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N 563 պայմանագրի (այսուհետ՝ «պայմանագիր») 10.2-րդ կետը՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 պայմանագրի 6.1.-ին կետում «փետրվարի 25-ը» և «մարտի 25-ը» բառերը համապատասխանաբար փոխարինել «մարտի 25-ը» և «ապրիլի 25-ը» բառերով.

1.1.2 պայմանագրի 9.1.-ին կետում «ապրիլի 25-ը» բառերը փոխարինել «մայիսի 25-ը» բառերով:

2. Եզրափակիչ դրույթներ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2020 թվականի փետրվարի 16-ից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարություն
Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի պատմության
թանգարան» ՊՈԱԿ
Քաղաք Երևան, Հանրապետության
Հրապարակ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001397
ՀՎՀՀ 02514442
Հեռ.՝ 011 56 58 12, 091 011 611

Տնօրեն՝

_____ Գ. Գրիգորյան

Կ.Տ.